ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Մեղրի համայնքի ավագանու անդամ Անահիտ Անդրեասյանս , իրականացրեցի Մեղրի համայնքի 2024թ. բյուջետավարման գործընթացի առանձին փուլերի և համայնքի ղեկավարի ներկայացրած 2024թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ ուսումնասիրություններ, որի արդյունքում կատարեցի հետևյալ եզրակացությունը.

1. Համայնքում բյուջեի կազմման գործընթացը հիմնականում համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ընթացակարգերին և մեթոդական ցուցումներին: Բյուջեի պլանավորման գործընթացը կազմակերպվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագրի՝ ՀԶՀԾ-ի և 2024թվականի տարեկան աշխատանքային պլանի՝ ՏԱՊ-ի, ինչպես նաև նախորդ տարիների տվյալների հիման վրա:

2. Համայնքում 2024թ. բյուջեի կատարման գործընթացը հաշվետվությունների հրապարակման տեսանկյունից թափանցիկ է: Բյուջեում կատարվող փոփոխությունների հրապարակայնությունն ապահովվել է համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքէջում՝www.meghri.am, ավագանու որոշումների տեղադրման միջոցով:

3.Մեղրի համայնքի 2024թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման գործընթացը թափանցիկ է : Համայնքում բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ և քննարկումներ: Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ հանրության իրազեկման լավագույն տարբերակը եղել է համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքէջը՝ համապատասխան որոշման տեղադրման միջոցով:

4. Համայնքի 2024թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ եկամտային ու ծախսային մասերում նախատեսված և փաստացի կատարված ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ բարձր են ու գոհացուցիչ:

Հիմք ընդունելով վերոգրյալը Մեղրի համայնքի ղեկավարի ներկայացրած 2024թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը գնահատում եմ դրական:

Մեղրի համայնքի ավագանու անդամ՝ Ա. Անդրեասյան Անահիտ Անդրեասյան

10 մարտի 2025թ.